



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

21 նոյեմբերի 2018 թ. № 141 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի № 143-Ա/1
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ինից 3-րդ մասերի՝ *հրամայում եմ*.

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության տարվա 20 լավագույն թեկնածու մարզիկների որոշման չափորոշիչների սանդղակը հաստատելու մասին» № 143-Ա/1 հրամանի № 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2018 թվականի հոկտեմբերի 21 -ի
N° 171 -Ա/1 հրամանի

«Հավելված N° 1
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2017 թվականի հուլիսի 17 -ի
N° 143-Ա/1 հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:
2. Մրցույթը կազմակերպվում է յուրաքանչյուր տարի՝ սույն կանոնակարգով սահմանված պայմաններով և կարգով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Մրցույթի նպատակներն են՝
 - 1) սպորտի միջոցով խթանել Հայաստան-Արցախ-սփյուռք կապերի ամրապնդումը և զարգացումը,
 - 2) Հայաստանի Հանրապետության մարզիկների մարզական հաջողությունների գնահատման գործընթացում ներգրավել առավել մեծ թվով մասնագետների,
 - 3) մեծարել սպորտում (օլիմպիական մարզաձևեր և ոչ օլիմպիական մարզաձևերից՝ ուշու, սամբո, շախմատ) ընթացիկ տարում նվաճումներ կամ նշանակալի հաջողություններ գրանցած, ինչպես նաև իրենց մրցելույթներով Հայաստանի և հայ ժողովրդի ճանաչելիությանը, հայոց պետական խորհրդանիշների, ազգային արժեքների հանրահռչակմանը նպաստած մարզիկներին,
 - 4) խրախուսել սպորտի զարգացումը և մասսայականացումը:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

5. Մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում կարող են ընդգրկվել Նախարարության, Հայաստանի Հանրապետության այլ նախարարությունների, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության, Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաների, մարզադպրոցների, սփյուռքի հայկական կառույցների ներկայացուցիչներ, անվանի մարզիկներ ու մարզիչներ, մարզական լրագրողներ, սպորտի հովանավորներ ու բարեգործներ: Հանձնաժողովը ձևավորվում է յուրաքանչյուր տարի մինչև տվյալ տարվա փետրվարի 15-ը:

6. Մրցույթի հաղթողները որոշվում են SMS քվեարկության և մրցույթի քվեարկության համար Նախարարության կողմից հավատարմագրված լրատվամիջոցների ու Նախարարությունում գրանցված օլիմպիական մարզաձևերի և ոչ օլիմպիական մարզաձևերից՝ ուշու, սամբո, շախմատ, Հայաստանի Հանրապետության հավաքականների գլխավոր մարզիչների (այսուհետ՝ գլխավոր մարզիչ) քվեարկության արդյունքների համադրմամբ:

7. Մրցույթի SMS քվեարկության անցկացման նպատակով Նախարարությունը սահմանված կարգով պայմանագիր է կնքում Հայաստանի Հանրապետությունում գործող հեռահաղորդակցության օպերատորական կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

8. Լրատվամիջոցների մասնակցությունը մրցույթի քվեարկությանը ապահովելու նպատակով Նախարարությունը ընթացիկ տարվա նոյեմբեր ամսին կազմակերպում է լրատվամիջոցների հավատարմագրում:

9. Գլխավոր մարզիչների մասնակցությունը մրցույթի քվեարկությանն ապահովելու նպատակով Նախարարությունը ընթացիկ տարվա նոյեմբեր ամսին կազմակերպում է նրանց գրանցումը Նախարարությունում (գլխավոր մարզիչների գրանցման և քվեարկությանը մասնակցելու անհնարինության դեպքում՝ նոյեմբեր ամսվա ընթացքում մարզաձևերի ֆեդերացիաները (օլիմպիական մարզաձևեր և ոչ օլիմպիական մարզաձևերից՝ ուշու, սամբո, շախմատ) քվեարկությանն այլ մասնագետի մասնակցության համար միջնորդություն են ներկայացնում նախարարություն, նշելով ներկայացուցիչ-մասնագետի տվյալները՝ անուն-ազգանուն, ֆեդերացիայում զբաղեցրած պաշտոնը):